

## ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ

### ԱՆԱՐԻՏ ԿԱՐՈՅԱՆ

Քրդական հարցը Մերձավոր Արևելքի թերևս ամենալայնածավալ ու բարդ խնդիրներից է, որը ներառում է Թուրքիան, Իրաքը, Իրանը, Սիրիան: Քրդական հարցն այլևս դադարել է բացառապես Թուրքիայի ներքին խնդիր լինելուց չնայած քրութի ամենահինգ զանգվածներն ապրում են հենց Թուրքիայում<sup>1</sup>: 2002 թ. իշխանության եկած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (AKP) փորձեց քրդական հարցում որդեգրել ավելի հանդուրժողական քաղաքականություն, որի ճախողումից հետո, սակայն, թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան խնդրի կարգավորման գործընթացը իրենց վերահսկողության ներքո պահելուն:

Թուրքիան այսօր կանգնած է մի շարք բարդ խնդիրների առջև, որոնցից կարևորագույնը շարունակում է մնալ քրդական հարցը, որը տասնյակ տարիներ ոչ մի լուծում չի ստանում: Քրդերը անկախ պետություն չունեցող ամենամեծաքանակ ազգն են և ցանկանում են ուղղել այդ «բացը»՝ ի հաշիվ Թուրքիայի արևելյան, Իրանի, Իրաքի և Սիրիայի հյուսիսային մի շարք շրջանների<sup>2</sup>: Քրդերը շարունակում են դեմոգրաֆիկ աճ գրանցել և էլավելի ուժեղացնել անկախության հասնելու իրենց փորձերը:

Թուրքիայում ապրող քուրդ ժողովրդի պահանջները հետևյալն են.

1. Սահմանադրութեան ճանաչել Թուրքիայում բնակվող քրդական փոքրամասնության էթնիկ, մշակութային և լեզվական իրավունքները,

2. Թուրքիայի վարչական համակարգի ապակենորդություն և տեղական ինքնակառավարման ավելի լայն լիազորությունների տրամադրում, այլ կերպ ասած՝ քուրդ ժողովրդին ինքնավարություն շնորհել<sup>3</sup>:

1978 թ. ձևավորված «Քրդաստանի բանվորական կուսակցությունը» (Partiya Karkeren Kurdistan կամ PKK)<sup>4</sup> առաջ է քաշում «Փեղերալացման» գաղափարը, այսինքն՝ համապատասխանաբար, թուրք-քրդական, իրա-

<sup>1</sup> Ըստ քրդական աղբյուրների՝ Թուրքիայում այսօր ապրում է շուրջ 20 միլիոն քուրդ, որոնք իմանականում կենտրոնացած են երկրի հարավարևելյան շրջաններում: Դենց այս տարածքներում էլ քրդերը թուրքական իշխանություններից պահանջում են լայն ինքնակառություն:

<sup>2</sup> Տե՛ս Graham E. Fuller, Ian O. Lesser, Turkey's new geopolitics: from the Balkans to Western China, Colorado, 1993, էջ.62:

<sup>3</sup> Տե՛ս Meliha Benli Altunishik, The possibilities and limits of Turkey's soft power in the Middle East, Insight Turkey, vol.10/N2/, 2008, էջ 33-35:

<sup>4</sup> «Քրդաստանի բանվորական կուսակցությունը» (Partiya Karkeren Kurdistan կամ PKK) սոցիալական և ազգայնական կազմակերպություն է, որի նպատակն է զինված պայքարի միջոցով Թուրքիայի հարավարևելյան և Իրաքի հյուսիսարևմտյան մասում թուրքիստան պետության հիմնումը: Կազմակերպությունը հիմնադրվել է 1978 թվականին Արդուլլահ Օջալանի կողմից, որը դատապարտվել է ցմահ ազատազրկման և իր պատիժը կրում է թուրքական Ինքալ կղզի-բանտում:

նա-քրդական, իրաքա-քրդական և սիրիա-քրդական դաշնության ստեղծումը: Այն բավականին ծայրահեղ գաղափար է և ձեռնտու չէ ունիտար պետության մոդելը պաշտպանող պետություններին: Ֆեդերալիզմի գաղափարը հնարավորություն է տալիս համագործակցելու արևմտյան հանրության հետ և միջամտելու Թուրքիայի, Իրանի, Իրաքի ու Սիրիայի ներքին գործերին<sup>5</sup>:

Թուրքական աղբյուրների համաձայն՝ «Քրդստանի բանվորական կուսակցության» գործունեության հետևանքով ավելի քան 37000 անմեղ բուրք քաղաքացիներ են զոհվել, ինչպես նաև զգալի տնտեսական վճաս է հասցվել Թուրքիային<sup>6</sup>:

Քրդական հարցում թուրքական իշխանությունների շարունակական ժամանակական քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ քրդերը դիմեն ծայրահեղ քայլերի, այն է՝ ահարեկման և ուժ կիրառելու միջոցով ստիպել թուրքական կառավարությանը ճանաչել քուրդ ժողովրդի իրավունքները: Այդ նպատակով կազմավորվեցին քրդական զինյալ խնբավորումներ, որոնք, Թուրքիայի ճնշման ներքո, ԱՄՆ-ի և ԵՄ երկրների կողմից պաշտոնապես ճանաչվել են ահարեկչական խնբավորումներ: Վերջիններս գործունեություն են ծավալում հիմնականում Հյուսիսային Իրաքի քանդիլի լեռներում:

Մինչ օրս Քրդական տարածաշրջանային կուսակցությունը ղեկավարում է Արդուլլահ Օջալանը, և Քրդական ազգային կոնգրեսի անդամ Զուբեյիր Այդարը: Կուսակցության հիմնադիրներից Մուրադ Քարայլան, Զեմիլ Բայըքը նույնպես շարունակում են կարևոր հարցեր քննարկել և որոշումներ կայացնել:

Թուրքիայում մշակված նոր ռազմավարության դրույթները քրուերի համար նախատեսում են մշակութային լայն իրավունքներ: Այս տեսանկյունից քենալականները նեռում անդամական մտածելակերպը վտանգավոր են համարում Թուրքիայի ազգային շահերի համար, քանի որ այն վտանգի է ենթարկում աշխարհիկ, ազգային ու հանրապետական արժեքները<sup>8</sup>: Այս նոր ռազմավարության ընդունումը զգալի առաջընթաց արձանագրեց քրդական խնդրի լուծման հարցում, քանի որ մինչև իշխող կուսակցության իշխանության գալը ընդիանրապես բացառվում էր քրդական հարցի գոյությունը: Ի հավելումն այս նոր ռազմավարության դրույթների՝ վերջերս Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդում ընդունվեց քրդական հարցի լուծման շուրջ գործողությունների մի նոր ալգորիթմ «Թուրքիայի հակաահաբեկչական ռազմավարությունը»<sup>9</sup>: Թուրքիայի «քրդական նախաձեռնության» հիմքում ընկած է «մեղմ» և «կոշտ» ուժերի զուգորդման գաղափարը: Այլ կերպ ասած՝ բացառել քրդական ահարեկչական PKK խնբավորման ու նրա առաջնորդ Ա. Օջալանի հետ որևէ շփում՝ միաժամա-

<sup>5</sup> Տե՛ս **Мурадян И.** Проблемы безопасности в ближневосточной политике США. Еր., 2003, էջ 125:

<sup>6</sup> Տե՛ս [www.mfa.tr](http://www.mfa.tr). PKK/KONGRA-GEL

<sup>7</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>8</sup> Տե՛ս **Meliha Benli Altunishik**, նշվ. աշխ., էջ 41-54:

<sup>9</sup> Տե՛ս Թուրքիայի վարչապետի պաշտոնական կայքէջը՝ <http://www.Basbakanlik.gov.tr> Turkiye'nin yeni terorle mücadele statejisi:

նակ շարունակել պայքարը վերջինիս դեմ, ակտիվ բանակցություններ վարել թուրքական խորհրդարանում քուրդ ժողովողի միակ ներկայացուցիչ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության հետ: Այս բանակցություններում Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության առաջնորդ Մասուլ Բարզամիի միջնորդական գործունեությամբ հանդես գալու հանգամանքը վկայում է Յյուսիսային Իրաքի Քրդական տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) փաստացի ճանաչման վերահաստատման մասին:

Թուրքիան միշտ կողմնակից է եղել Իրաքի տարածքային ամբողջականության պահպանմանը՝ փորձելով ապահովագրվել իր տարածքում քրդական նման ինքնավարություն ստեղծելուց: Եթե մինչև «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալը տարածաշրջանային ուժերը ոչ միայն բացահայտորեն չեն պաշտպանում Թուրքիայի նման տեսակետը, այլև ակնհայտորեն աջակցում են քրդական գինյալ կազմակերպություններին, ապա քրդական հարցում այդ կուսակցության Վարած ճկուն քաղաքականության շնորհիվ տարածաշրջանային և գլոբալ ուժերի նարտավարությունը որոշակի փոփոխություններ կրեց:

2003 թ. ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք և վերջինիս մասնատման հնարավոր հեռանկարը անհանգստություն առաջացրին Թուրքիայում: Թուրքական քաղաքական վերնախավին առաջին հերթին նտահոգում էին ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից քրդական գործոնի կարևորումը և դրա արդյունքում՝ Իրաքի հյուսիսում քրդական պետություն ձևավորելու հնարավորությունը: Այդ հանգամանքը կարող էր նպաստել Թուրքիայի արևելյան քրդաբնակ նահանգներում անկախական շարժումների, այդ թվում՝ «Քրդստանի բանվորական կուսակցության» (ՔԲԿ) գործունեության ակտիվացմանը: Թուրքական բանակը Յյուսիսային Իրաքի լեռնային տարածքներում հաստատված ՔԲԿ հենակետերի և գինյալների դեմ իրականացրեց տասնյակ մարտական գործողություններ, իսկ 2008 թ. փետրվարին թուրքական զորքերը լայնածավալ ներխուժում իրականացրին Իրաքի հյուսիս: Դրան հետևեց Իրաքի իշխանությունների հայտարարությունը այն մասին, որ Թուրքիան ոտնահարում է Իրաքի ինքնիշխանությունը:

Արտաքին ճակատում թե Թուրքիան, թե՝ Իրաքը կողմնակից են վերջինիս տարածքային ամբողջականության պահպանմանը՝ չճանաչելով քրդական ինքնավարության գոյությունը Յյուսիսային Իրաքի տարածքում, իսկ ներքին ճակատում արդեն քրդական հարցի շուրջ տարբեր նոտեցումներ են դրսևորվում Թուրքիայում և Իրաքում: Եթե Իրաքում քրդերին վերապահված են ազգային փոքրամասնության կարգավիճակ և նշակութային լայն իրավունքներ, ապա Թուրքիայում չի ճանաչվում անգամ քրդերի, որպես առանձին ազգային փոքրամասնության, գոյության փաստը<sup>10</sup>:

Թուրքիան մի կողմից հանդես է գալիս Իրաքի տարածքային ամբողջականության երաշխավորությամբ, մյուս կողմից օգտագործում է Քրդական ինքնավարության գործոնը Իրաքը թուլացնելու և նրա ներքին գործերին միջամտելու համար: Պաշտպանելով Իրաքի սուլնի թուրքմեն բնակչության շահերը, որոնք այնքան էլ մեծ թիվ չեն կազմում Իրաքում (500 հա-

<sup>10</sup> Տես Graham E. Fuller, Ian O. Lesser, նշվ. աշխ., էջ 61:

զար), Թուրքիան քաջ գիտակցում է, որ սուննի-շիա պայքարն Իրաքում ի վերջո հանգեցնելու է եթե ոչ փլուզման, ապա առնվազն Իրաքի թուլացման:

Թուրքիան սեփական երկրի խնդիրը լուծելու համար աշխատում է օգտագործել Իրաքի քրդական ինքնավարության խաղաքարտը, որը քաղաքական ինքնուրույն միավոր է Իրաքում և տարածքային որևէ պահանջ չունի Թուրքիայից: Այս տեսակետից Թուրքիան քաջ գիտակցում է, որ նավեռվ հարուստ շրջանների նկատմամբ de facto վերահսկողություն հաստատած Քրդական տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) հետ ավելի հեշտ է փոխհամաձայնության գալ՝ օգտվելով վերջինիս de jure չճանաչվածությունից, քան թե Իրաքի իշխանությունների հետ: Դրանով Թուրքիան փորձում է դաշնակիցներ փնտրել քրդական ահաբեկչական ΡΚΚ գինյալ խմբավորման դեմ պայքարելու համար: Յենց այս համատեքստում էլ ձևավորվել է սերտ համագործակցություն տարածաշրջանային դերակատարների՝ Իրանի և Թուրքիայի միջև: Այսօր Թուրքիայի և Իրանի միջև մի շարք հարցերի շուրջ սակայն կան հակասություններ և տարածայնություններ: Այդ հարցերի շրջանակում պետք է ընդգրկել քրդական հարցը, Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի առաջնային դեր և ազդեցություն ձեռք բերելու մրցակցությունը, ինչպես նաև «քաղաքական իսլամի» գաղափարը տարածաշրջան ներմուծելու Իրանի ձգտումը<sup>11</sup>:

Դայտնի է, որ Թուրքիան քրդական գինյալ խմբավորումների դեմ պայքարելու և Իրաքում իր դիրքերն անրապնդելու նպատակով աջակցում է սուննի, իսկ Իրանը՝ շիա դեկավարներին: Վերջիններս իրենց ահաբեկչական գործողությունների իրականացման վայր են ընտրել Հյուսիսային Իրաքի տարածքը: Թուրքիան և Իրանը փոխհամաձայնության են եկել սահմանամերձ շրջանների հետախուզական տվյալների փոխանակման շուրջ<sup>12</sup>: Ըստ պայմանավորվածության՝ թուրքական իշխանությունները Իրանի միջուկային ծրագրի հարցում պաշտոնապես հայտարարել են, որ իրենց համար պարտադիր իրավական ուժ ունեն միայն ԱՄԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը, այլ ոչ թե ամերիկյան միակողմանի պատժամիջոցները Իրանի նկատմամբ:

Իսրայելը, լինելով ԱՄՆ-ի հենակետը տարածաշրջանում, փորձում է շարունակել քրդերին աջակցելու և վերջիններին գենք վաճառելու ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը: Այս համատեքստում խիստ սրվեցին թուրքիայելական հարաբերությունները: Այս փաստը ինչ-որ չափով նպաստեց նաև Իսրայելի ոխերին հակառակորդ Իրանի հետ Թուրքիայի մերձեցմանը:

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն իր աշխատություններից մեկում նշում է Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունները պայմանավորող հետևյալ գործոնները.

- Իսրայելի՝ տարածաշրջանային գերտերության հավակնելու նկրտումները, ԱՄՆ-ի աջակցությունն Իսրայելին և այդ առումով Թուրքիայի անհանգստությունը,
- Իսրայելի՝ միջուկային գենքի տիրապետելու գործոնը,

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 63:

<sup>12</sup> Տե՛ս «Iraq and the Kurds: International Crisis Group (ICG)», report N120, Middle East Institute, 19 April, 2012:

- Քրդական գործոնը,
- Հրեական լոբբիստական ազդեցիկ գործոնը,
- Թուրքիայի միջնորդական պարտավորություններ ստանձնելու գործոնը իսրայելա-պաղեստինյան և իսրայելա-սիրիական հակամարտություններում և Իսրայելի դիրքորոշումն այս հակամարտությունների շուրջ,
- Իսրայելի տարածաշրջանային նոր ռազմավարությունը<sup>13</sup>:

Իսրայելի որդեգրած տարածաշրջանային նոր ռազմավարությունը հայտնի է նաև «Բեն Գուրիոնի դոկտորին» անվամբ: Այն, որպես բացահայտ այլընտրանք արաբական աշխարհին, նախատեսում է Իսրայելի սերտ փոխգործակցությունը տարածաշրջանի այնպիսի ոչ արաբական պետությունների հետ, ինչպիսիք են Թուրքիան և Իրանը<sup>14</sup>: Դենց այս արտաքին քաղաքական հայեցակարգի շրջանակներում Իսրայելը ԱՄՆ-ի լուր համաձայնությամբ սկսեց ռազմական և նյութական աջակցություն ցուցաբերել Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությանը<sup>15</sup>: Այս հանգամանքն էլ տապալեց Իսրայելի որդեգրած հայեցակարգը, քանի որ տարածաշրջանի ոչ արաբական երկրները Թուրքիան և Իրանը, շարունակական պայքար են մղում քրդական հենց այն նույն խմբավորումների դեմ, որոնց գինում է Իսրայելը: Իրանը, որպես հակակշիռ Իսրայելի կողմից օժանդակություն ստացող քրդական զինյալ խմբավորումների, շարունակում է աջակցել «Ճամաս» և «Ճեզբոլլահ» ահաբեկչական կազմակերպություններին, որոնք բացահայտ պայքար են մղում Իսրայելի դեմ:

Ինչ վերաբերում է ներկայիս Սիրիայում տիրող ներքաղաքական խիստ լարված իրավիճակին, պետք է նշել, որ հնարավոր է՝ պարարտ հող նախապատրաստվի երկրում ապրող քրդերի ակտիվացման և լայն ինքնավարություն պահանջելու համար: Այս հանգամանքը իր հերթին լուրջ մտահոգություն է առաջ բերում Թուրքիայում, քանի որ Վերջինս միշտ հանդես է եկել քուրդ ժողովրդի ինքնավարության և Զուրդիստան պետության ստեղծման դեմ: Պատմությունը և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մերձավոր Արևելքում առկա հակամարտությունների ընդհանուր համապատկերում քրդական հարցը տարածաշրջանի երկրների համար ինչ-որ տեղ միավորող և միասնական շահերից բխող հարց է: Թուրքիան, Իրանը, Իրաքը և Սիրիան այն երկրներն են, որոնցում կենտրոնացած է քրդերի գերակշիռ մասը, ուստի նշված երկրների վարած քաղաքականությունը ենթադրում է այդ երկրների փոխշղթայվածության:

Այսպիսով, քրդական խմբիրը միշտ էլ երել է և այսօր էլ մնում է թե՛ տարածաշրջանային, թե՛ գլոբալ ուժերի քաղաքական շահարկումների ա-

<sup>13</sup> **Sténi Ahmet Davutoglu**, Stratejik derinlik:Turkiye’nin uluslararası konum, Kure yayinlari, Istanbul 2001, sayfa 420; Zeitgeist:global politics and Turke, Ankara, Orion 2001,էջ 84:

<sup>14</sup> Իսրայելի արտաքին քաղաքականության հիմքում ընկած «Բեն Գուրիոնի դոկտորին» առաջադրվել է Իսրայելի առաջին վարչապետի կողմից դեռևս 1949 թ., որի անունով էլ այն կոչվում է:

<sup>15</sup> Ըստ թուրքական կառավարությանը մոտ կանգնած աղբյուրների (տես «Anadolu Ajansi», «Anadolu Türk Interneti» (ATIN))՝ քրդական ահաբեկչական PKK զինյալ խմբավորմանը զենք-զինամթերք վաճառող անձինք նախկինում աշխատել են Իսրայելի ազգային հետախուզական ծառայության (MOSSAD) նախկին դեկավար Դեյվիդ Կիմչեի հետ, որն էլ իսրայելական MOSSAD-ի գաղտնի ցուցումներով կատարել է այդ գործարքը:

ռարկա: Թուրքիայի եթնիկ քաղաքականության ձախողման հարցում ինչ-որ չափով իրենց մասնաբաժինն ունեն նաև այս խնդրի մեջ ներքաշված թե՝ տարածաշրջանային, թե՝ գլոբալ բոլոր ուժերը:

Քրդական հարցում Թուրքիան այսօր կանգնած է երկընտրանքի առջև. շարունակե՞լ ընդլայնել քրդերի իրավունքները, թե՞ կոչտ ուժի դիրքերից հանդես գալով՝ ճնշել քրդական շարժումը: Առաջին դեպքում Թուրքիայի մտահոգությունն այն է, որ, քրդերին մշակութային իրավունքներ շնորհելով, չխախտվի երկրի ներքին հավասարակշռությունը: Իսկ երկրորդ դեպքում առաջանում է այն հարցը, թե արդյո՞ք երաշխավորված կլինի Թուրքիայի ռազմական գործողությունների հաջողությունը՝ հատկապես այն դեպքում, երբ միշտ էլ կգտնվեն քրդական հարցը Թուրքիայի դեմ օգտագործել ցանկացող ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ ուժեր: Կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի և Իրանի, Իրաքի, Սիրիայի միջև հարաբերությունների հիմքում ընկած է քրդական հարցի շուրջ վերջիններիս դիրքորոշումը, ընդ որում՝ այդ հարաբերություններում Թուրքիան հանդես է գալիս որպես կարևոր դերակատար ուժ:

**АНАИТ КАРОЯН – *Курдский вопрос и Турция*.** – Поскольку Ближний Восток является частью международной политической системы, всё, что происходит в регионе, имеет значение для глобальной политики. Курдский вопрос рассматривается в статье в контексте последних событий на Ближнем Востоке. Играя существенную роль во внешней политике Турции, Ирана, Ирака и Сирии, он во многом обусловлен стремлением живущих в этих странах курдов к автономии. Причём это стремление лишь усиливается с течением времени.

**ANAHIT KAROYAN – *The Kurdish Issue and Turkey*.** – Taking into consideration the factor that the Middle East is the component of international political system any initiated action in this region leaves its impact on international relations. The article deals with the problem of the Kurdish issue in the context of recent developments in the Middle East. The Kurdish issue has a great role in the foreign policy of Turkey, Iran, Iraq and Syria. Autonomy aspirations of the Kurdish people living in the countries of the mentioned region tend to grow over time.